ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Որոշման նախագծով սահմանվում է Սիսիան համայնքում տեղական տուրքերի և տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը, որն ուժի մեջ կմտնի 2023 թվականի հուլիսի 1-ից՝ հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 568-Ն օրենքի փոփոխությունը: Մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը կգործեն Սիսիան համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 67-Ն որոշման կարգավորումները, որոնք գործել են 2023 թվականի համար ևս՝ պայմանավորված համայնքի նախկին ավագանու անդամների լիազորությունների դադարեցմամբ և 2023 թվականի համար օրենքով սահմանված կարգով, նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհնարինությամբ:

Ֆինանսա-տնտեսական ու հաշվապահական հաշվառման գործառույթներ իրականացնող՝ **Դ. Այվազյան**

05.05.2023թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

2023 թվականի համար համայնքում սահմանված տեղական տուրքերի և վճարների վերաբերյալ ավագանու համապատասխան որոշումն ընդունելուց հետո կիրականացվի բյուջեի կազմման եկամտային մասի ճիշտ պլանավորումը:

Ֆինանսա-տնտեսական ու հաշվապահական հաշվառման գործառույթներ իրականացնող՝ **Դ. Այվազյան**

05.05.2023թ.